ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 8, 1958 Общественные науки

Հ. Կարապետյան

ՍՈՎԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՆՈՐ ԲԱՅԱԶԵՏԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄՂԱԾ ՊԱՅՔԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

I

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան, հաղթանակելով Ռուսաստանի կենտրոնում, արագորեն ծավալվեց ամբողջ երկրում, ընդգրկելով նրա ծայրամասերը, այդ թվում և Անդրկովկասը։

Պրոլետարական ռևոլյուցիայի հաղթանակից անմիջապես հետո, աշխատավոր մարդկության մեծ առաջնորդ Վ. Ի. Լենինը ազդարարեց Ռուսաստանի քաղաքացիներին. «Այն գործը, որի համար պայքարում էր ժողովուրդը՝ դեմոկրատական հաշտության անհապաղ առաջարկում, հողի կալվածատիրական սեփականության վերացում, արտադրության վրա բանվորական վերահսկողություն, Սովետական կառավարության ստեղծում,—այդ գործն ապահովված է»[1]։

Ժողովրդի իղձերի իրականացման մասին լենինյան այդ կարևոր փաստաթուղթը հասավ նաև Անդրկովկասի, այդ թվում և Հայաստանի բանվորներին, գյուղացիներին ու զինվորներին, որոնք նույնպես տոգորված էին այդ կարևորագույն խնդիրների կենսագործման տենչով։

Անդրկովկասի իշխող դասակարգերին հաջողվեց իմպ'ریալիստների օգնությամբ ժամանակավորապես կասեցնել Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթանակը երկրամասում, սակայն երկարատև խափանել սովետական կարգերի հաղթանակի համար մասսաների մղած պայքարը նրանք չկարողացան։

Հայաստանում սովետական կարգերի հաստատման համար մղված պայքարի պատմության մեջ պայծառ էջեր գրեցին նաև Նոր Բայազետի գավառի աշխատավորները։

Նոր Բայազետի գավառը անցյալում եղել է Հայաստանի հետամնաց շրջաններից մեկը։ Գավառի բնակչության թիվը, ըստ 1919 թ. նոյեմբերի տվյալների, հասնում էր 72 հազարի, որից մոտ 6750-ը վերաբնակիչներ էին։ Գավառի տնտեսության մեջ հիմնական տեղ էին գրավում հողագործությունը և անասնապահությունը։ Տնտեսության այդ ճյուղերն էլ գյուղացիների ապրուստի գլխավոր միջոցն ու աղբյուրն էին։

Համաշխարհային առաջին պատերազմի տարիներին ինչպես ամբողջ Հայաստանի, այնպես էլ Նոր Բայազետի գավառի գյուղատնտեսությունը հիմնովին քայքայվեց, սակայն այդ քայքայումը առավել մեծ չափերի հասավ 1918—1920 թթ.։

Բավական է նշել, որ 1913 թ. համեմատությամբ Հայաստանի հացահատիկային կուլտուրաների ցանքատարածությունը 1919 թ. կրճատվել էր մոտ չորս անգամ։ Նոր Բայազետի գավառում 1914 թ. միջին հաշվով յուրաքանչյուր 100 շնչին հասնում էր 35,0 դեսյատին ցանքատարածություն, իսկ 1919 թ.՝ 8,3

[1] Լենին, Երկեր, հատ. 26, էջ 283։

դեսյատին, այսինքն ցանքատարածությունը պակասել էր ավելի քան 4,2 անգամ[1]։

1918—1920 թթ. գավառի բնակիչների մի զգալի մասը՝ վերաբնակիչները, չքավոր տնտեսությունները և նույնիսկ անցյալում միջակ տնտեսություն ունեցող գյուղացիների մի մասը բառիս իսկական իմաստով զրկվել էր հողը մշակելու հնարավորությունից։ Սերմացուի, քաշող ուժի, գյուղատնտեսական գործիքների, երբեմն էլ աշխատող ձեռքի բացակայության հետևանքով շատ գյուղերում մշակելի հողերի 80—90 տոկոսը չէր մշակվում։ Այդպիսի գյուղերի թվին էին դասվում Ծաղկունը, Ղշլաղը (Արծվաքար), Ցամաքարերդը, Վ. Ջաղալուն և շատ ուրիշներ։

Գավառում հողազրկությունը և սակավահողությունը մեծ չափերի էր հասնում։ Լավագույն հողը, քաշող ուժը, արտադրության մյուս միջոցները շարունակում էին կենտրոնանալ կուլակային-ունևոր տնտեսությունների ձեռքում։ Նյութական ծանր պայմաններից զրկված՝ աշխատավոր գյուղացին վաճառում էր ինչ հնարավոր էր, որպեսզի թեկուզ կարճ ժամանակով պահպանի իր ընտանիքի գոյությունը։ Պաշտոնական, թերևս նվազեցրած, տվյալներով գավառի բնակչության ավելի քան 43 տոկոսը, կամ մոտ 30 հազար շունչ, գտնվում էր ծայրահեղ չքավորության մեջ և առանց կողմնակի օգնության չէր կարող պաշտպանել իր գոյությունը։ Սակայն այդ օգնությունը ընդհանրապես բացակայում էր, իսկ եթե երբեմն լինում էր, ապա այնպիսի չնչին չափերով, որ զրությունը երբեք էլ չէր կարելի բարելավել։ Ամենուրեք տիրում էր սովն ու աղքատությունը. այդ պատճառով գավառի բնակչության մեջ չափազանց բարձր էր մահացությունը։

Հայտնի է, որ անցյալում նյութական վատ պայմաններից զրկված, Նոր Բայազետի գավառից զգալի թվով աշխատող ձեռքեր աշխատանքի էին գնում Անդրկովկասի և Ռուսաստանի արդյունաբերական վայրերը։ «Ազգային անկախ» ռեսպուբլիկաների ստեղծումով արտագնացության հնարավորությունը այլևս վերացավ։ Գավառի բնակչության զրությունն է՛լ ավելի վատթարացավ։ Այս պայմաններում հողազուրկ գյուղացիները պահանջում էին նոր հողաբաժանություն, իսկ կառավարությունը դրա մասին լսել անգամ չէր ցանկանում։ Նա միայն կատարում էր գյուղում իր հենարանի՝ գյուղական բուրժուազիայի թելադրանքը, է՛լ ավելի նպաստելով հողի կենտրոնացմանը առանձին մարդկանց ձեռքին։

Անիշխանությունն ու տեռորը, որ տիրում էին ամենուրեք, այդ թվում նաև Նոր Բայազետի գավառում, անտանելի էին դարձել աշխատավորության համար։ Գնալով աճում էր արդարացի զայրույթը։ Նոր Բայազետից գրում էին, որ այնտեղ անիշխանությունը «հսկայական չափերի է հասնում»։

Շահրիզ (Գեղամավան), Ծաղկունք, Դիմաշեն գյուղերի հասարակության կողմից Հայաստանի «վարչապետին» հասցեագրված 1919 թ. սեպտեմբերի 13-ի անստորագիր դիմումի մեջ գյուղացիները պահանջում էին իրենց ազատել շրջանի ավազակ և ավանտյուրիստ կոմիսարից, որ անխղճորեն մաշկում և պլոկում է ժողովրդին։

Այդ կոմիսարը իր մարդկանցով շրջում է գյուղերը, գրում էին գյուղացիները, և «անարգ կերպով թալանում» խեղճ գյուղացիներին, ամեն բան պահան-

[1] Տե՛ս Հայկական ՍՍՌ ՊԿԱ, ֆ. 163, Գյուղատնտեսական բաժին, գ. 17, թ. 15։

ջում և վերցնում է առանց վճարի։ Եթե պահանջած «յուղի փոխարեն պանիր արվի՝ բանդ վերջացավ...»[1]։

Մասնավորապես սոսկալի դրություն էր ստեղծվել Ջաղալու, Ղրխբուլաղ (Ակունք), Բուսկյուլու, Ցամաքաբերդ, Ծաղկունք, Գյոզալդարա (Վարդենիկ), Նորադուզ, Ղշլաղ, Ներքին Ադիաման (Ն. Գետաշեն) և մի շարք այլ գյուղերում։

1918 թ. նոյեմբերին Նորագյուղ գյուղից գրում էին, թե ուզ գյուղերի ապրուստի գլխավոր միջոցներից մեկը՝ լճից և գետից ձուկ որսալու իրավունքը, կառավարությունը խլել և հանձնել է Նոր Բայազետի կուլակ-վաշխառու Աֆրիկյանին, չնայած որ գյուղացիները ավելի շատ կապալավարձ էին վճարում, քան Աֆրիկյանը։ Գյուղացիները ասում էին. «Մենք և մեր երեխաները սովամահ կլինենք և դրսից մի լույս ծագելուն ենք սպասում»։ Շատ ընտանիքներ աշխատանք գտնելու համար, ստիպված հեռանում էին գյուղերից, փորձում էին անցնել Թիֆլիս, Ռուսաստան, չնայած ճանապարհները դեռևս փակ էին[2]։

Գյուղի պրոլետար, կիսապրոլետար և միջակ գյուղացիների համար պարզ է դառնում դաշնակների ու նրանց կառավարության կիրառած քաղաքականության հակաաշխատավորական էությունը։ Երկրում հաստատված քաղաքական և սոցիալ-տնտեսական կարգը աշխատավորների համար ատելի էր։

II

Դաշնակների տիրապետության դեմ ուղղված հետզհետե խորացող դժգոհությունները վեր են ածվում աշխատավորության ռևոլյուցիոն ելույթների, հաճախ՝ զինված ընդհարումների, բորբոքելով դասակարգային պայքարը թե գյուղում և թե՛ քաղաքում։

1918 թ. հունիսի վերջերին Նոր Բայազետի գավառային իշխանությունների դիտությամբ մաուզերիստների մի ջոկատ խմբապետ Շաբոյի գլխավորությամբ գնում է Դալիդարդաշ (այժմ Սարուխան) գյուղը գյուղացիներից անվճար վերցնելու մեծ քանակությամբ սննդամթերք՝ հաց, միս, յուղ և այլն։ Մաուզերիստների լկտիությանը սահման չկար։ Նրանք պահանջում էին նույնիսկ կանանց ոսկե զարդեր։ Գյուղացիները հրաժարվում են կատարել այդ լկտի պահանջները։ Բանակցությունների համար առանձնացված գյուղի ներկայացուցիչների ձերբակալումը և նախկին բանվոր Բ. Կոռյանի սպանությունը մաուզերիստների ձեռքով առաջ է բերում մեծ ընդհարում։ Գյուղացիները ռևոլյուցիոն գործիչների՝ Խ. Ավետիսյանի, Ա. Նաջարյանի, Մ. Թորոսյանի և մյուսների ղեկավարությամբ զենքի են դիմում իրենց իրավունքները պաշտպանելու համար։ Զինված ընդհարումը կատաղի բնույթ է ստանում. մաուզերիստների ջոկատից սպանվում է ավելի քան 40 մարդ, իսկ մի մասն էլ զինաթափ է արվում։ Գյուղացիներին և նրանց ղեկավարներին պատժելու դաշնակների կառավարության փորձը հաջողություն չի ունենում՝ այն հանդիպում է Դալիդարդաշի և հարևան գյուղերի բոլոր աշխատավորների կազմակերպված դիմադրությանը։

1918 թ. հոկտեմբերի 20-ին արյունահեղ ընդհարում է տեղի ունենում կառավարության զինված մարդկանց և Ղշլաղ ու Դուլալի (այժմ Կարմիր) գյուղե-

[1] Առաջին մասսայական-հեղափոխական շարժումները Հայաստանում, էջ 203։
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 99։

րի գյուղացիների միջև։ Միջադեպի պատճառը կառավարության կիրառած կուլակային քաղաքականությունն էր, իսկ առիթը՝ հիշված գյուղերի գյուղացիներից «Դոլակներ» կոչվող լճամասից ձուկ որսալու իրավունքի խլելը և այն Նոր Բայազետի վաշխառուներին հանձնելն էր։ Գյուղացիները դիմագրում էին այդ որոշման ի կատար ածմանը։ Պաշտպանելով կուլակների շահերը, կառավարությունը կարգադրում է զենքի ուժով ստիպել գյուղացիներին հեռանալ հիշված լճամասից և զիջել այն կապալառուներին։ Գյուղացիների և կառավարության մարդկանց միջև սկսվում է զինված ընդհարում, որը կատաղի բնույթ է ստանում ու տևում չորս ժամ։ Գյուղացիներից սպանվում են երեք և վիրավորվում չորս մարդ[1]։ Այս դեպքը մեծ զայրույթ է առաջացնում գավառի աշխատավորների մեջ, ատելության ցասումով համակում նրանց դեպի դաշնակներն ու նրանց հակաաշխատավորական կառավարությունը։

Գոմաձոր գյուղի աշխատավորները, բանակից վերադարձած կոմունիստ Մեխակ Սարգսյանի ղեկավարությամբ 1918 թ. սկզբներին գյուղում ստեղծում են իրենց իշխանությունը՝ Սովետը։ Սովետի ղեկավարությամբ Գոմաձորի և Ցամաքաբերդի գյուղացիները հրաժարվում են Սևանի վանքին բահրա վճարելուց, իրենց ձեռքն են վերցնում ջրաղացը[2], դրանից ստացվող եկամուտը տրամադրվում է հանրային նպատակների համար՝ օգնում են չքավոր տնտեսություններին։

Գավառի աշխատավորության մեջ դժգոհությունների մեծ ալիք են բարձրացնում դաշնակների և խմբապետների հրահրած ազգամիջյան ընդհարումները, դաշնակների գործադրած գազանությունները ադրբեջանական բնակչության նկատմամբ։

Աշխատավորների պայքարը ընդդեմ դաշնակների տիրապետության ավելի կազմակերպված և մասսայական բնույթ է ստանում 1919 թ. վերջերին և 1920 թ. սկզբներին։ Գյուղացիների և զինվորների ռևոլյուցիոն տրամադրություններին ճիշտ ուղղություն են տալիս տեղի բոլշևիկները, որոնք եռանդուն աշխատանք էին ծավալել ամբողջ գավառում։ Եթե 1917—1918 թթ. Նոր Բայազետի բոլշևիկյան կազմակերպություններից բացի, մյուս գյուղերում և զինվորների մեջ աշխատում էին միայնակ կոմունիստներ, ապա 1919—20 թթ. դրությունը միանգամայն փոխվում է։ Գավառում կազմակերպվում և սկսում են գործել ավելի քան 15 բոլշևիկյան բջիջներ՝ 200-ից ավելի անդամներով։

Նոր Բայազետի գավառում տարվող ռևոլյուցիոն աշխատանքները ղեկավարում էին ականավոր բոլշևիկ գործիչներ Հովհաննես Սարուխանյանը և Բատիկ Բատիկյանը։ Այդ աննկուն բոլշևիկները՝ զինված մարքս-լենինյան իդեաներով, իրենց շուրջն էին համախմբել գավառի ռևոլյուցիոն տրամադրություններով համակված աշխատավորներին և անհաշտ կռիվ էին մղում բոլոր հակառևոլյուցիոն կազմակերպությունների, խմբակցությունների ու տարրերի դեմ։

Հ. Սարուխանյանի և Բ. Բատիկյանի ղեկավարությամբ և անմիջական մասնակցությամբ 1919—1920 թթ. ընթացքում բոլշևիկյան բջիջներ են կազմակերպվում Դայիդարդաշ, Ելենովկա (Սևան), Ալիղրխ (Աստղաձոր), Գոմա-

[1] Տե՛ս «Նոր Հորիզոն», № 15, 1918։

[2] Տե՛ս Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33, ց. 8, գ. 7, թ. 1—44։

ձոր, Զոլախաչ (Զոլաքար), Գյոզալդարա, Փաշաքենդ (Հացառատ) և մի շարք այլ գյուղերում ու զինվորական մասերում։

Պարտիական աշխատանքները գավառում ավելի են աշխուժանում 1919 թ. հուլիսին Ասքանազ Մռավյանի Նոր Բայազետ գալուց հետո, որի ցուցումները նոր լիցք են տալիս տեղի ակտիվին։

Նոր Բայազետի բոլշևիկյան կոմիտեն հմտորեն դասավորում էր իր ուժերը այն հաշվով, որպեսզի գյուղերում, հիմնարկներում և զինվորների մեջ ապահովված լինի կոմունիստական աշխատանքը։ Հայաստանի, այդ թվում և Նոր Բայազետի, բոլշևիկյան կազմակերպությունների առջև ծառացած կարևորագույն խնդիրներից մեկը աշխատավորական լայն խավերի մեջ դաշնակների ազդեցության դեմ մղվող պայքարն էր, դաշնակների մեկուսացումը մասսաներից։ Այս կապակցությամբ հարկավոր էր օգտագործել թե՛ լեգալ և թե՛ անլեգալ բոլոր հնարավորությունները. աշխատավորների մեջ կատարել սիստեմատիկ, համբերատար և հետևողական աշխատանք, սերտ կապ հաստատել նրանց հետ, լինել նրանց իղձերի ու ցանկությունների արտահայտիչը, ցույց տալ ազատագրության իսկական ուղիները։ Հայաստանի բոլշևիկները քաջ գիտակցում էին, որ այդ խնդիրների իրականացումը կպահանջի հաղթահարել բազմաթիվ դժվարություններ, կատարել անդադրում համառ աշխատանք բնակչության բոլոր խավերում։ Այդ ամենը հաշվի առնելով Նոր Բայազետի գավառի հիմնարկներում ու աշխատավորության մեջ ռևոլյուցիոն աշխատանքի են լծվում Հ. Սարուխանյանը, Բ. Բատիկյանը, Ա. Ղարագյուլյանը, Բագ. Բատիկյանը, Հ. Կամարյանը, Հ. Պետրոսյանը, Գ. Ստեփանյանը, Բ. Բոշնաղյանը, Գ. Թելումյանը, Պ. Պետրոսյանը, Մ. Մխիկյանը, Ա. Մանվելյանը և ուրիշներ։ Փաշաքենդ գյուղում քաղաքական-մասսայական աշխատանք էին կատարում Պ. Մկրտչյանը, Ս. Թորգոմյանը, Ա. Աֆրիկյանը, Դալիղարդաշում՝ Խ. Ավետիսյանը, Վ. Հարությունյանը և պարտիայի մյուս անդամներ։

Ելենովկայի գավառամասի գյուղերում Ի. Շչեգրինի և Մ. Սարգսյանի ղեկավարությամբ պատիական ռևոլյուցիոն ակտիվ աշխատանք էին կատարում Ի. Գորբաչովը, Մ. Նեչաևը, Կրավեցը, Ա. Ղարիբյանը, Հ. Գասպարյանը, Շ. Տեր-Գրիգորյանը, Հ. Մնացականյանը, Յա. Ֆարեսևը և ուրիշներ։ Ղարանլուղի (Մարտունու շրջանում) աշքի ընկնող ագիտացիոն-մասսայական աշխատանք էին ծավալել բոլշեիկ ուսուցիչներ Ս. Բուդումյանը, Ա. Բատիկյանը, Վանո, Աղաբեկ և Խանալով Սիրունյանները, Խ. Փոշոտյանը, Հ. Շուքուրյանը, Փ. Միքայելյանը։ Բասարգեչարում պարտիական աշխատանքը գլխավորում էր Հ. Մհերյանը։ Զինվորների մեջ քաղաքական աշխատանքը հանձնարարված էր Ս. Մակարյանին, Ս. Գրիգորյանին, Պետրովին, Լ. Խանֆերյանին, Գ. Դագիկյանին, Հ. Խաչատրյանին և ուրիշների։

Գավառի փոստ-հեռագրատան հիմնարկները փաստորեն գտնվում էին բոլշևիկների հսկողության տակ։ Նոր Բայազետի փոստի բաժանմունքում աշխատում էր Գ. Հարությունյանը, Ելենովկայում՝ Գ. Հովակիմյանը, Ղարանլուղում՝ Մ. Պետրոսյանը։ Անժխտելի է նրանց մատուցած ծառայությունները պարտիային ընդհանրապես, և մասնավորապես մայիսյան օրերին։

1919—20 թթ. Նոր Բայազետի գավառում ծավալված ռևոլյուցիոն աշխատանքների ընթացքում, թե՛ մայիսյան ապստամբության նախապատրաստման, թե՛ նրա իրականացման գործում և թե՛ հետագայում, ակտիվ դեր էր կատարում Նոր Բայազետի կոմունիստական երիտասարդական «Սպարտակ» կազ-

մակերպությունը, որը ձևավորվել էր Ղ. Ղուկասյանի անմիջական ղեկավարությամբ։ «Սպարտակի» ակտիվ անդամների՝ Պ. Պետրոսյանի, Ա. Բատիկյանի, Փ. Միքայելյանի, Շ. Պետրոսյանի, Խ. Օհանյանի, Գ. Մարինոսյանի, Ա. Ղարաբաղցյանի և մյուսների հետևողական ու աննկուն աշխատանքով աշխատավոր երիտասարդությունը համախմբվում էր բոլշևիկների շուրջը։ «Սպարտակի» անդամները անդադրում պայքար էին մղում դաշնակների և նրանց երիտասարդական կազմակերպության դեմ, մերկացնում նրանց կոնտրռևոլյուցիոն էությունը, աշխատավոր երիտասարդներին պարզաբանում Սովետական իշխանության նվաճումները Ռուսաստանում, բոլշևիկների պարտիայի դերը հայ ժողովրդի փրկության գործում և այլ հարցեր։ «Սպարտակի» անդամների կատարած աշխատանքի շնորհիվ շատ երիտասարդներ, մասնավորապես դպրոցների բարձր դասարանների աշակերտությունը, ատելությամբ են լցվում դեպի դաշնակները, աջակցում «Սպարտակի» աշխատանքների ծավալմանը։

Նոր Բայազետի բոլշևիկները հմուտ կերպով օգտագործում էին բոլոր լեգալ հնարավորությունները դաշնակների դեմ մղվող պայքարում։ Պրոֆմիութենական ժողովները, ուսուցչական հավաքները, կոոպերատիվ կազմակերպությունները, քաղաքային դուման՝ այն վայրերն էին, որտեղ դաշնակների դեմ մերկացնող ելույթներ էին ունենում բոլշևիկները։ Լինում էին դեպքեր, երբ կազմակերպվող երեկույթներն ու բեմադրությունները օգտագործվում էին բոլշևիկյան ագիտացիայի համար։ Ավելորդ չի լինի հիշատակել մի փաստ, որի մասին պատմում են ականատեսներն ու մասնակիցները. 1919 թ. հուլիսին Ելենովկայի պարտիական կազմակերպության ղեկավարությամբ և նրա անդամների ակտիվ մասնակցությամբ կազմակերպվում է մի պիեսի բեմադրություն։ Պիեսի բովանդակության մեջ ուսուցիչ Կրավեցը կատարել էր բոլշևիկյան ագիտացիային նպաստող կարևոր փոփոխություններ, օգտագործելով ռևոլյուցիոն ոտանավորներ և երգեր։ Պիեսում բանվորի դերում հանդես եկող դերակատար Ի. Շչեդրինը օգտագործում է երեք քառյակից բաղկացած մի ռևոլյուցիոն ոտանավոր։

Ահա դրանից մի նմուշ.

Стонет и тяжко страдает
Армянский забитый народ,
Руки он к нам простирает,
Коммунистов на помощь зовет.

Դաշնակների կոմիսարը, որը գտնվում էր ներկայացման սրահում, փորձում է զենքով ահաբեկել դերակատարներին, պահանջում է դադարեցնել ներկայացումը, սակայն հասարակության ճնշման տակ ստիպված հեռանում է դահլիճից։

Հարկ է հիշատակել, որ բոլշևիկյան պարտիական-քաղաքական աշխատանքը Հայաստանում, ինչպես և Նոր Բայազետում նկատելիորեն աշխուժանում է հատկապես ՀԿ(բ)Պ կենտրոնի՝ Արմենկոմի կազմակերպումից հետո, որը տեղի ունեցավ 1919 թ. սեպտեմբերին։ Հայաստանի աշխատավորների ազատագրման համար մղվող պայքարում խոշոր նշանակություն ունեցան Հայաստանի Կոմպարտիայի 1920 թ. հունվարյան կոնֆերանսի որոշումները։ Կոնֆերանսը որոշակիորեն նշեց, որ «դաշնակների իշխանության լոնի, ռևոլյուցիոն տա-

պալումը Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների առաջնահերթ խնդիրն է», որ Սովետական իշխանության հաստատումը, կործանումից ժողովրդական լայն մասսաների փրկությունը, հնարավոր է միայն այդ ճանապարհով[1]։

Ֆիզիկական բնաջնջման սպառնալիքի տակ գտնվող հայ ժողովրդին չէին կարող փրկել ո՛չ ամերիկա-անգլիական իմպերիալիստների ոտորմությունը, ոչ էլ նրանց քաղաքագետների «մարդասիրական» կեղծ խոստումները։ Հայաստանի աշխատավորների փրկությունը հայ և ռուս ժողովուրդների եղբայրական դարավոր բարեկամությունը վերակենդանացնելու և ուժեղացնելու մեջ էր, բարեկամություն, որը դաշնակները ձգտում էին փոխարինել գաղութարարների ստրկացնող լծով։

Կոնֆերանսի դիրեկտիվների իրագործումը Հայաստանում, դրա նախապատրաստումը դառնում է պարտիական կազմակերպությունների գործունեության առաջնահերթ և կենտրոնական խնդիրը։ Նոր Բայազետի բոլշևիկները, Հայաստանի պարտիական կազմակերպությունների հետ միասին, իրենց աշխատանքը վերակառուցում են կոնֆերանսի որոշումները կենսագործելու տեսանկյունով, է՛լ ավելի համախմբելով աշխատավորական մասսաներին բոլշևիկյան պարտիայի շուրջը։

1920 թ. հունվար-ապրիլ ամիսների ժամանակամիջոցում աճում ու ամրապնդվում են Հայաստանի, այդ թվում և Նոր Բայազետի, կոմունիստական կազմակերպությունները, ուժեղանում է նրանց կապերը աշխատավորների լայն խավերի հետ։ Այնքան ակնառու էր այս փաստը, որ էսեռները ստիպված էին խոստովանել, թե «բոլշևիզմի համակրանքը զգալի է մեր երկրում», թե մեր գյուղացիության աչքում բոլշևիզմը նույն Ռուսաստանն է։

Հայաստանի տնտեսական և քաղաքական ճգնաժամը խորանում էր։ Ավելի բացահայտ էր դարձել աշխատավորության ատելությունը դաշնակների և նրանց սովի ու արյան «կառավարության» նկատմամբ։ Սովետական իշխանության համար մղվող պայքարը է՛լ ավելի մեծ թափ էր ստացել։ Վճռական գոտեմարտը հասունանում էր արագ տեմպերով։ Այդ բոլորը փայլուն կերպով հաստատվեց մայիսյան զինված ապստամբության օրերին։

III

Սովետական Ռուսաստանի զինված ուժերի պատմական հաղթանակները ռազմաճակատներում և նրանց հաղթարշավը դեպի Կովկաս ազատագրական պայքարի նոր, ավելի ուժեղ ալիք է բարձրացնում Անդրկովկասում։ 1920 թ. ապրիլի վերջին Ադրբեջանում հաստատվում են սովետական կարգեր։ Այդ ոգեշնչում է Հայաստանի բանվորներին, գյուղացիներին և զինվորներին։ Մայիսմեկյան ցույցերը Հայաստանում դառնում են մասսայական ապստամբության նախերգանքը։ Ցույցերը անցնում են բոլշևիկյան լոզունգներով, ամենուրեք ցուցարարները գնում էին բոլշևիկների հետևից։ Մի շարք վայրերում՝ Ալեքսանդրապոլում, Երևանում, Ղարաքիլիսայում, Սարիղամիշում, Կարսում ցույցերը անցնում են լարված քաղաքական մթնոլորտում։

Մայիսմեկյան տոնից հետո ավելի է սրվում քաղաքական դրությունը

[1] Տե՛ս „Резолюции коммунистической организации РКП (б) в Армении". Баку. 1920.

հատկապես Ալեքսանդրապոլում. մայիսյան ցույցերը վեր են ածվում ապըստամբության։ Շատ վայրերում աշխատավորները պահանջում են վերցնել իշխանությունը։ Ալեքսանդրապոլի բանվորներն ու զինվորները ամբողջովին պաշտպանում են դաշնակների իշխանությունը տապալելու և Սովետական իշխանություն հաստատելու լոզունգը։ Այդպիսի եզրակացության է գալիս Արմենկոմի ներկայացուցիչների և Ալեքսանդրապոլի, Կարսի, Սարիղամիշի, Քյավթառլուի և զրահագնացքի պարտիական ակտիվի մասնակցությամբ տեղի ունեցած խորհրդակցությունը, որ գումարվում է մայիսի 7-ին Ալեքսանդրապոլում։ Խորհրդակցությունը գտնում է, որ ապստամբությունը անխուսափելի է, ընտրում է Հայաստանի Ռազմա-ռևոլյուցիոն կոմիտե, նշանակվում է ապստամբության օրը։

Մինչև այդ, հաշվի առնելով Կարմիր Բանակի տարած հաղթանակները, սովետական կարգերի հաստատումը Ադրբեջանում, Հայաստանի աշխատավորների ռևոլյուցիոն տրամադրությունները՝ Արմենկոմը նախապատրաստական աշխատանք է ծավալում ապստամբությանը ընդհանուր բնույթ տալու ուղղությամբ։

Հայաստանի Ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեի որոշումը մայիսի 9—10-ին ապստամբության դրոշ բարձրացնելու մասին փաստի առաջ կանգնեցրեց Արմենկոմին։ Դրանից ելնելով Արմենկոմը անհրաժեշտ համարեց ապստամբական գործողությունները սկսել նաև մյուս վայրերում, այդ թվում և Նոր Բայազետի գավառում։ Ապստամբության կազմակերպումը և գլխավորումը Նոր Բայազետի գավառում Արմենկոմը հանձնարարում է աննկուն բոլշևիկ Հավհաննես Սարուխանյանին, որին դաշնակների իշխանությունը ապրիլի կեսերին արտաքսել էր Նոր Բայազետից։

Նոր Բայազետի կազմակերպության առաջ խնդիր էր դրված օգնել Ալեքսանդրապոլի ապստամբությանը՝ գործողություններ ծավալելով Ելենովկայի ուղղությամբ։ «Համապատասխան հրահանգով,— ասված է Անդրերկոմին ուղղված Արմենկոմի 1920 թ. մայիսի 31-ի զեկուցագրում,— մենք Նոր Բայազետի շրջան ուղարկեցինք այժմ հանգուցյալ ընկ. Սարուխանյանին... որն իրականացրեց Արմենկոմի առաջադրությունը և սկսեց գործողությունները»[1]։

Հ. Սարուխանյանը իրեն հանձնարարված չափազանց պատասխանատու և կարևոր գործը իրականացնելու վճռականությամբ մայիսի 9-ին մեկնում է Նոր Բայազետ։ Հ. Սարուխանյանը ռևոլյուցիոն պայքարի և ընդհատակյա աշխատանքի հարուստ փորձ ուներ, մոտիկից ծանոթ էր Նոր Բայազետի աշխատավորներին և մեծ հեղինակություն էր վայելում աշխատավորության լայն շրջաններում։ Ելենովկայից Նոր Բայազետ ուղևորվելիս Հ. Սարուխանյանը ճանապարհին հանդիպում է գավառային կոմիսարին, որը խիստ սպառնալիքի տակ փորձում է ստիպել Սարուխանյանին հրաժարվել Նոր Բայազետ մեկնելու մտադրությունից, սակայն ստանում է մերժում։ Նույն կոմիսարը Ելենովկայից հեռագրով հայտնում է գեներալ Սիլիկովին, որը գտնվում էր Ղարանլուղում, Սարուխանյանի Նոր Բայազետ վերադառնալու մասին և խնդրում է դիմել անհրաժեշտ միջոցառումների։ Առանց հապաղելու Սիլիկովը հեռագրով Սարուխանյանից պահանջում է ներկայանալ իրեն՝ «անձամբ խոսելու» համար։

Լարված իրադրության պայմաններում Սարուխանյանի վերադարձը Նոր

[1] Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33, գ. 850, թ. 1—4։

Բայազետ ստիպում է դաշնակներին զգուշանալ և դիմել կոնկրետ միջոցների։ Թշնամին զգում էր, որ մի շարք վայրերում բոլշևիկների ղեկավարությամբ դաշնակների արյունոտ ռեժիմի դեմ ծայր առած աշխատավորների զինված ապստամբությունները իրենց արձագանքը կգտնեն նաև Նոր Բայազետի գավառի աշխատավորների միջավայրում, ոտքի կելնեն նաև նրանք, ուստի և ձգտում էր կանխել այն։ Հենց այդ նպատակով էլ գեներալ Սիլիկովը պահանջում էր Սարուխանյանին ներկայանալ իրեն։

Նոր Բայազետում Սարուխանյանը տեսակցում է Բ. Բատիկյանի հետ, նրան տեղյակ դարձնում տիրող քաղաքական իրադրությանը, բացատրում Նոր Բայազետ իրեն գալու նպատակները։

Մայիսի 10-ին Սարուխանյանը Նոր Բայազետից մեկնում է Ղարանլուղ, որտեղ հրավիրում է պարտիական ակտիվ, ծանոթացնում Հայաստանում տիրող ներկա մոմենտին և խնդիր դնում անհապաղ նախապատրաստվելու ապստամբության։ Ակտիվի խորհրդակցությունը հավանություն է տալիս այդ առաջարկին, մշակվում են միջոցառումներ, ընդ որում առանձնակի ուշադրություն է նվիրվում կայազորի զինվորների մեջ կատարվելիք աշխատանքներին, որից հետո միայն Սարուխանյանը տեսակցություն է ունենում գեներալ Սիլիկովի հետ։ Վերջինս փորձում է ստիպել Սարուխանյանին հրաժարվելու ռևոլյուցիոն աշխատանքից։ Արհամարհելով գեներալի սպառնալիքները, Սարուխանյանը նրան կտրականապես պատասխանում է, որ կոմունիստները երբեք չեն նահանջում իրենց նպատակներից, չեն հրաժարվում իրենց գաղափարներից, և չեն կատարում թշնամու թելադրանքը։

Նույն օրը երեկոյան Սարուխանյանը դասավորում է պարտիական ուժերը, նրանց վրա դնում կոնկրետ պարտականություններ։

Պետք է նշել, որ ինչպես ամբողջ Հայաստանում, այնպես էլ Նոր Բայազետի գավառում որոշակիորեն հասունացել էր իրադրությունը ապստամբության համար։ Սովետական իշխանության հաստատվելը Ադրբեջանում, Կարմիր Բանակի մոտիկությունը Հայաստանի սահմաններին ավելի և ավելի էր ոգևորում աշխատավորությանը և հակում նրան դեպի ապստամբությունը։ Անհրաժեշտ էր այդ ուղղությամբ է՛լ ավելի խորացնել աշխատանքը։

Այդ օրերին դաշնակների կառավարությունը պահանջել էր Բասարգեչարի կայազորից մի գումարտակ ուղարկել Լեռնային Ղարաբաղ՝ Կարմիր Բանակի զորամասերի դեմ ռազմական գործողություններին մասնակցելու համար։ Զինվորները վճռականապես հրաժարվում են կատարել հրամանատարության կարգադրությունը։ Ըմբոստացած զինվորներից մոտ 300 հոգի հեռանում են Բասարգեչարից և շարժվում Ղարանլուղի ուղղությամբ։

Զինվորների մեծ մասը Ղարանլուղի շրջանի գյուղացիներից էին։ Ճանապարհին նրանք գիշերում են իրենց գյուղերում՝ Գյոզալդարայում, Զոլախաչում, Ալիղրխում և այլն։ Զինվորները դիմում են այդ գյուղերի կոմունիստներին՝ Ս. Բուղումյանին, Վ. Սիրունյանին, Խ. Փոշոտյանին, Ա. Սիրունյանին և մյուսներին՝ խնդրելով օգնել իրենց, տալ խորհուրդներ՝ հետագա գործողությունների համար։ Օգտվելով այդ նպաստավոր առիթից, կոմունիստները նրանց մեջ զգալի բացատրական աշխատանք են կատարում, պարզաբանե-

---

[1] Տե՛ս Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 36, գ. 7, կ. 1, պատմական մաս, թ. 107—113։

յով, որ անհրաժեշտ է միանալ Ղարանլուղի կայազորի զինվորներին և միասնաբար ապստամբվել դաշնակների իշխանության դեմ։ Եթե մինչ այդ շատ զինվորների մեջ գոյություն ուներ նպատակների ոչ պարզ պատկերացում, տարակուսանք, դասալքելու և լեռները բարձրանալու տրամադրություն, ապա բացատրական աշխատանքներից հետո նրանք հասկանում են իրենց խնդիրները։ Զինվորները պատրաստ էին անցնելու ապստամբության կողմը, կռվելու հանուն սովետական կարգերի։

Բասարգեչարի կայազորի զինվորների ըմբոստանալու և դեպի Ղարանլուղ շարժվելու լուրը հասնում է Սարուխանյանին։ Սարուխանյանը որոշում է սդնել զինվորներին, գլխավորել պայքարը՝ ընդգրկելով նրանց դաշնակների դեմ մղվող ընդհանուր շարժման մեջ։ Զինվորների տրամադրությունները շոշափելու և նրանց մեջ աշխատանք կատարելու նպատակով առանձնացվում են մի քանի կոմունիստներ, որոնք Ս. Մակարյանի գլխավորությամբ մեկնում են զինվորներին ընդառաջ և հանդիպում նրանց Գյոդակրուլաղ գյուղում (Կարճաղբյուր)։ Զրուցելով զինվորների հետ Ս. Մակարյանը համոզվում է, որ նրանք համակված են հակադաշնակցական տրամադրություններով և լի՝ պայքարելու վճռականությամբ։ Դաշնակների հրամանատարության բոլոր ջանքերը զինվորներին համոզելու և նրանց ճանապարհից դորանոց վերադարձնելու ուղղությամբ ապարդյուն է անցնում։ Անհաջողության է մատնվում նաև հրամանատարության մտադրությունը՝ ըմբոստ զինվորներին հնազանդեցնելու Ղարանլուղի կայազորի և մաուզերիստների միջոցով։ Կոմունիստների գլխավորությամբ մայիսի 13-ին ըմբոստ զինվորները մտնում են Ղարանլուղ և միանում տեղի կայազորի զինվորներին։ Դաշնակցական սպաները նորից են փորձ անում համոզել զինվորներին, ահաբեկել նրանց ինչ-որ Հայաստանին սպառնացող վտանգով։ Դաշնակների «հայրենասիրական» ելույթներին զինվորները պատասխանում են սուլոցներով և աղմուկով։ Կայազորի հրամանատար գնդապետ Կոֆիևի կողմից զինվորներին ուղղված այն հարցին, թե ի՞նչ է նրանց պահանջը, զինվորները միաձայն բացականչում են. «Կրասնի վլաստ (այսինքն՝ Սովետական իշխանություն) ենք ուզում»։ Այդ մոմենտին զինվորներից մեկը փորձում է պոկել հրամանատարի ուսադիրները։ Չտանելով այդ անպատվությունը դաշնակցական սպաներից մեկը կրակում է, որը զինվորների կողմից անպատասխան չի մնում։ Օգտվելով ստեղծված իրարանցումից մի շարք դաշնակ սպաների հաջողվում է փախուստի դիմել և ապատվել զայրույթով լցված զինվորներից[2]։ Կոմունիստները, իրենց ձեռքը վերցնելով ապստամբած զինվորների ղեկավարությունը, գրավում են փոստ-հեռագրատունը, շրջանի հիմնարկները և ձերբակալում գեներալ Սիլիկովին այն մոմենտին, երբ նա ապրստամբության լուրը հաղորդում էր Նոր Բայազետ։

Անմիջապես հրավիրվում է կոմունիստների, զինվորների և աշխատավորների ներկայացուցիչների ժողով, որը ընտրում է դավառային Ռևկոմ-ռևոլյուցիոն կոմիտե՝ Սարուխանյանի գլխավորությամբ։ Ռևկոմի կազմում ընտրվում են նաև Ս. Մակարյանը, Մ. Պետրոսյանը, Հ. Խաչատրյանը, Բ. Մինասյանը, Լ. Ներսիսյանը և Ս. Բոստանջյանը։ Կազմվում է նաև շրջանային ռևկոմ, որի

---

[1] Տե՛ս Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 36, գ. 7, կ. 1, պատմական մաս, թ. 57—61։

[2] Տե՛ս նույն տեղում։

կազմում ընտրվում են Ա. Նալբանդյան (նախագահ), Վ. Սիրունյան, Ս. Վարդանյան, Լ. Խանֆերյան և Ա. Լազարյան[1]։

Ռևկոմի ցուցումով ավելի քան 15 գյուղերում վերացվում են իշխանության հին մարմինները և կազմակերպվում է ռևոլյուցիոն իշխանություն՝ Սովդեպներ։ Այդ գյուղերի թվին էին պատկանում Ալիզրխը, Գյոլը (Լիճք), Գյոդալդարան, Ավդալադալուն (Վարդաշեն), Երանոսը, Դալիզարդաշը, Քյուսաջըղը (Լանջաղբյուր) և այլն։ Ղարանլուղի շրջանում Սովդեպների կազմակերպման գործը վարում էին Ռևկոմի ներկայացուցիչներ՝ Ս. Բուդումյանը, Խ. Փոշոտյանը, Հ. Շուքուրյանը և Ա. Սիրունյանը։

Մայիսի 15-ին, մինչև Նոր Բայազետ շարժվելը, Ղարանլուղում հրավիրվում է գինվորների և գյուղացիների մասսայական միտինգ։ Միտինգում մարտական ճառով հանդես է գալիս Հ. Սարուխանյանը։ Դիմելով ապստամբներին, նա նշում է, որ ժողովրդի հերոսական ապստամբության շնորհիվ տապալվել է դաշնակների անարդ իշխանությունը շրջանում, և որ պետք է վճռական դրոշի անցնել կոնտրռևոլյուցիայի դեմ։ Հարկավոր է ազատագրել Նոր Բայազետը և Ելենովկայի վրայով միանալ Ղազախ-Շամշադինի ապստամբ աշխատավորներին, միացյալ ուժերով շարունակել պայքարը հանուն Սովետական իշխանության ամրողջ Հայաստանում։ Միտինգի մասնակիցները խանդավառությամբ են դիմավորում իրենց բոցաշունչ ղեկավարի կոչը և հավաստիացնում, որ Ռևկոմի գլխավորությամբ կպայքարեն հայ տառապյալ ժողովրդի ազատագրության համար։ Մայիսի 15-ին ապստամբները շարժվում են Նոր Բայազետ, նախօրոք ամրացնելով իրենց թիկունքը։ Վ. Սիրունյանը նշանակվում է շրջանային կոմիսար, մի շարք կոմունիստների թողնում են տեղերում աշխատելու համար։ Բոլոր գյուղերի աշխատավորները ջերմ ընդունելություն են ցույց տալիս ապստամբ բանակին, գյուղերում տեղի են ունենում մասսայական միտինգներ, շատ գյուղացիներ միանում են նրանց։

Նոր Բայազետի պարտիական կազմակերպությունը նույնպես պատրաստվում էր ապստամբվելու, սակայն դաշնակներին հաջողվում է կանխել այն մասսայական ձերբակալություններով։ Մայիսի 14-ին ձերբակալվում և Սևանի կղզին են արտաքսվում Հ. Զարգարյանը (նա Բայազետ էր եկել Արմենկոմի հանձնարարությամբ), Ս. Բոշնաղյանը, Ա. Ղարագյուլյանը, Պ. Պետրոսյանը, Մ. Մխիկյանը, Գ. Թելումյանը, Գ. Հովակիմյանը, Ս. Միքայելյանը, Վ. Դավթյանը և ուրիշներ։ Սակայն դաշնակներին չի հաջողվում ջախջախել բոլշևիկյան կազմակերպությունը։

Դաշնակցական կառավարության արտակարգ լիազորները, որոնք Նոր Բայազետ էին ուղարկվել աշխատավորների ռևոլյուցիոն ելույթները ճնշելու նպատակով, Մինիստրների խորհրդին ներկայացրած իրենց զեկուցագրում խոստովանում էին, որ «ոչ միայն Ղարանլուղ արշավելու, այլ անգամ քաղաքը տեղական ուժերով պաշտպանելու հնարավորություն չկար... Միլիցիան անվստահելի էր»[2]։ Ապստամբների դեմ կռվելու պատրաստակամություն են հայտնում, ինչպես ասված է հիշյալ զեկուցագրում, միայն միլիցապետը

---

[1] ՏԵ՝ Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալի արխիվ. ֆ. 35, գ. 7, կ. 1, պատմական մաս, Ա. 57—61։

[2] Հայկական ՍՍՌ ԿԳԱ, ֆ. 199, գ. 147, թ. 7

և գավառային կոմիսարը իրենց վստահելի երկու—երեք տասնյակ միլիցիոներով[1]։

Պարզ է. դաշնակները անզոր էին դիմադրել ապստամբներին, չէին կարող կասեցնել նրանց առաջընթացը դեպի Նոր Բայազետ։ Դաշնակները ժողովրդի լայն խավերի մեջ աջակցություն չէին գտնում։ Քաղաքի աշխատավորների հիմնական մասը թշնամաբար էր տրամադրված դեպի դաշնակները և նրանց հենարանը՝ վաշխառուական-առևտրական և կուլակային տարրերը։ Հետևաբար, նրանք վախենում էին նաև իրենց թիկունքից։ Երբ արտակարգ լիազորները համոզվում են, որ հնարավոր չէ ապստամբների դեմ դիմադրություն կազմակերպել, հրամայում են իրենց հավատարիմ միլիցապետին և կոմիսարին. «Դիմադրել մինչև վերջին հնարավորությունը, իսկ եթե մեզ չհաջողվի մինչև այդ հասցնել զինված ուժեր, դուրս գալ քաղաքից, միայն պաշտպանության վերջին հնարավորությունը սպառելուց հետո...»[2]։ Իրենք՝ լիազորները աճապարում են հեռանալ Նոր Բայազետից։

Մայիսի 17-ի առավոտյան, դուրս գալով Դալիզարդաշ գյուղից, իրենց հետ միացնելով այդ գյուղի ավելի քան 150 աշխատավոր գյուղացիների, ապրստամբները երկու զորասյունով Ղուլալի (այժմ Կարմիր) և Փաշաքյանդ գյուղերի ուղղություններով շարժվում են Նոր Բայազետի վրա։ Հակառակորդը քաղաքից ոչ հեռու փորձում է դիմադրել հարձակվող ապստամբներին, բայց պատասխան հարված ստանալով ոչ միայն ճակատից, այլև թիկունքից՝ ազատ մնացած կոմունիստների ու «Սպարտակի» անդամների կողմից, դաշնակ հրոսակները փախչում են Ելենովկա։ Օրվա երկրորդ կեսին ապստամբական ուժերը գրավում են Նոր Բայազետը։ Ռևկոմը ամբողջ իշխանությունը իր ձեռքն է վերցնում։

Ապստամբների հետագա խնդիրն էր՝ ամրապնդել իշխանությունը թիկունքում և շարունակել հարձակումը Ելենովկայի ուղղությամբ։

Դեռևս մայիսի 15-ից դաշնակները Ելենովկայում որոշ ուժեր էին կենտրոնացնում։ Բայազետից, Դիլիջանից և շրջակա գյուղերից հավաքագրելով դաշնակցական-կուլակային և մաուզերիստական տարրերին, նրանք մտադիր էին դիմադրել ապստամբներին։

Մայիսի 17-ին Նոր Բայազետի ապստամբների դեմ Երևանից ուղարկվում է մի հետևակային զորամաս երկու թնդանոթով և հինգ գնդացիրով գեներալ Խանգալամյանի հրամանատարությամբ։ Նույն օրը հակառակորդը բռնում է Նոր Բայազետից Ելենովկա և Ախտա տանող ուղիները։ Մայիսի 18-ին ապրստամբների հետախուզությունը պարզում է, որ թշնամին Հաջիմուխան գյուղում (Սևանա լճի ափին, Բայազետից 13—14 կիլոմետր դեպի Ելենովկա) ուժեր է կենտրոնացնում։ Մայիսի լույս 19-ի գիշերը դաշնակները մի սպառնալից վերջնագիր են ուղարկում Ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեին, պահանջելով անձնատուր լինել առանց դիմադրության։ Ռազմ-ռևկոմի նախագահ Սարուխանյանը դաշնակների ուղարկած և վերջնագիր պարունակող թղթին վճռականորեն պատասխանում է, որ ապստամբները բոլշևիկների ղեկավարությամբ կռվում

---

[1] Տե՛ս Հայկական ՍՍՌ ԿՊԱ, ֆ. 190, գ. 147, թ. 7—8։
[2] Նույն տեղում, ֆ. 67/190, գ. 147, թ. 8։

են շահագործողների, ժողովրդի թշնամիների՝ դաշնակների և նրանց տիրապետության դեմ, և ապստամբների պայքարը վճռական է ու անհաշտ։

Ապստամբները իրենց ուժերը դասավորում են Ելենովկա տանող խճուղու շրջակայքում՝ Նոր Բայազետից 6—8 կիլոմետր հեռավորության վրա և պատրաստվում վճռական մարտի։

Ռևկոմը՝ չունենալով համապատասխան հրամանատարական կազմ, ստիպված էր ապստամբ զորամասերի հրամանատարությունը դեռևս մայիսի 14-ին հանձնել դաշնակցական բանակի նախկին սպաներից մեկին, որը սակայն, մայիսի 18-ի գիշերը դավաճանում է, կազմակերպում գեներալ Սիլիկովի փախուստը Նոր Բայազետից, իսկ ինքը մեկ ուրիշ սպայի հետ նույն գիշերը անցնում հակառակորդի կողմը։

Մայիսի 19-ի առավոտյան սկսվում են մարտական գործողություններ։ Թշնամու հրանոթային կրակի տակ ապստամբների աջ թևը, զորամասի հրամանատարի հրամանով, նահանջում է և դադարեցնում պայքարը, ձախ թևը՝ կոմունարները, Սուրեն Մակարյանի գլխավորությամբ հերոսաբար դիմադրում են, հետ մղում թշնամուն, և շարժվում առաջ։ Սակայն աջ թևի նահանջը չէր կարող չկասեցնել և իսկապես կասեցնում է կոմունիստական ջոկատի գործողությունների հետագա ընթացքը։ Հաշվի առնելով ստեղծված իրադրությունը, երեք-չորս ժամ դիմադրելուց հետո, Սուրեն Մակարյանի ջոկատը նահանջում է դեպի արևմուտք՝ լեռները։

Յերեկվա ժամը 4-ին դաշնակները մտնում են Նոր Բայազետ։ Փաշաքյանդ գյուղը նահանջած Ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեի նախագահ Հովհաննես Սարուխանյանը մատնությամբ ընկնում է դաշնակ դահիճների ձեռքը։ Անմարդկային, դաժան տանջանքների ենթարկելուց հետո, թշնամին Սարուխանյանին մահամերձ վիճակում բանտ է նետում։ Երեք օր հետո, բոլշևիկյան պարտիայի աննկուն զինվոր Հ. Սարուխանյանին ժողովրդի թշնամիները գազանաբար գնդակահարում են։

Դաշնակ դահիճները գնդակահարում են նաև ապստամբության մի շարք ակտիվ մասնակիցների, այդ թվում՝ Գ. Դադիկյանին, Պետրովին և ուրիշների։ Բանտ են նետվում բազմաթիվ կոմունիստներ, «Սպարտակ» կազմակերպության անդամներ։ Բանտ է տարվում նաև ծանր հիվանդությամբ մահճակալին գամված, ապստամբությանը ֆիզիկապես մասնակցելու հնարավորությունից զրկված, Սարուխանյանի մարտական ընկեր, բոցաշունչ բոլշևիկ Բ. Բատիկյանը, որը գնդակահարվում է ավելի ուշ՝ հոկտեմբերին։

Հայ ժողովրդի ազատագրության վեհ գործի համար մղված պայքարում ընկան Նոր Բայազետի աշատավորների լավագույն զավակներից նաև Ս. Մակարյանը, Հ. Խաչատրյանը, Բ. Ավետիսյանը, Ս. Վարդանյանը, Ա. Նալբանդյանը, Փ. Միքայելյանը, Ղ. Հովյանը, Ս. Հակոբյանը, Ս. Նազարյանը և ուրիշներ։

Նոր Բայազետի մայիսյան ապստամբությունը, ինչպես տեսանք, ուշ սկսվեց։ Երբ այն ծավալվում էր ապստամբությունը ճնշված էր արդեն Ալեքսանդրապոլում, Կարսում և Սարիղամիշում, իսկ Դիլիջանի գավառում դեռևս չէր սկսվել։ Այս հանգամանքը հակառակորդին հնարավորություն տվեց իր ուժերը կենտրոնացնելու Նոր Բայազետի ապստամբների դեմ։ Չնայած այն բանին, որ

[1] Տե՛ս Հայկական ՍՍՌ ԿՊԱ, ֆ. 67/199, գ. 117, թ. 8։

Նոր Բայազետի ապստամբների դեմ ուղարկվող զինվորների մեջ ապստամբների կողմն անցնելու տրամադրություններ կային, սակայն այն իրականացնել չի հաջողվում։ Ապստամբների դիմադրությունը լինում է կարճատև. դավաճանությունը, որ կատարվում է նախկին դաշնակ սպաների կողմից կռվի տաք մոմենտին՝ որոշում է նրա ելքը։ Այսպիսով թշնամուն հաջողվեց ճանապարհ բացել դեպի Նոր Բայազետ։

Հարձակողական միանգամայն ճիշտ տակտիկան, որ գործադրեց Ռազմահեղափոխական կոմիտեն գավառում՝ ապստամբության սկզբից, չիրականացվեց մինչև վերջը։ Երկու օր սպասելով Բայազետում՝ ապստամբները իրենց ձեռքից բաց թողեցին հարձակման նախաձեռնությունը. այդ հանգամանքից օգտվեց թշնամին, ինքը անցնելով հակահարձակման։

Հայաստանի, այդ թվում և Նոր Բայազետի, բանվորները, գյուղացիները և զինվորները, Կոմունիստական փառատպանծ պարտիայի ղեկավարությամբ, 1920 թ. մայիս-հունիս ամիսներին զինված ապստամբություն բարձրացրին, որպեսզի վերջ դնեն դաշնակների հակաժողովրդական տիրապետությանը, ժողովրդին փրկեն տիրող անարխիայից, տեռորից, աղքատությունից և թշվառությունից, երկիրը դուրս բերեն տնտեսական ծայրահեղ փլգումից։ Հայաստանի աշխատավորները իրենց ռուս եղբայրների օրինակով պայքարում էին Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթանակը Հայաստանում ապահովելու համար։ Այդ հաղթանակի հետևանքով միայն հնարավոր էր իշխանությունը հանձնել աշխատավորներին. նրանց ազատագրել կեղեքումից, լուծել ագրարային-գյուղացիական և բանվորական հարցերը, սոցիալ-տնտեսական և քաղաքական պայմաններ ստեղծել սոցիալիզմ կառուցելու համար։ Թեև մայիսյան ապստամբությունը Նոր Բայազետում ճնշվեց, բայց այն հանդիսացավ Հայաստանի մայիսյան ապստամբության փառավոր էջերից մեկը, նրանից մեծ դասեր քաղվեց՝ Սովետական իշխանության հաստատման համար մղվող հետագա պայքարում։